ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի

տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Արմեն Սարգսյանի՝ 2019 թ. մայիսի 16-23-ը Իտալիայի Տուշայի համալսարան կատարած այցի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի մայիսի 16-23-ը Եվրամիության Էրազմուս+ KA 107 ծրագրի շրջանակներում Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի պատվիրակությունը պաշտոնական այցով գործուղվել էր Իտալիայի Տուշայի համալսարան: Պատվիրակության կազմում էին՝ կրթության որակի ապահովման բաժնի պետ Նարինե Վարդանյանը, գիտական քարտուղար Ատոմ Մխիթարյանը, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Արմեն Սարգսյանը, արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը:

Այցի շրջանակներում Գիտակրթական միջազգային կենտրոնի պատվիրակությունը ունեցավ տարատեսակ հանդիպումներ: Մասնավորապես այցի շրջանակներում ԳԿՄԿ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Արմեն Սարգսյանը հանդիպեց Տուշայի համալսարանի SS համակարգերի սպասարկման բաժնի ցանցային տվյալների փոխանցման գրասենյակի ղեկավար Կլաուդիո Իտոի և SS ծառայությունների մատուցման գրասենյակի ղեկավար Ջամպաոլո Պուգլիեսի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին տեղեկատվական համակարգերի կառավարմանը և սպասարկմանը վերաբերող հարցեր, սերվերային համակարգերի, ինչպես նաև SS ծառայությունների տեսակների և հեռավար ուսուցման համակարգերի ներդրման և զարգացման հնարավորությունները: Հանդիպումը շարունակվեց գրասենյակի աշխատակիցների հետ, ովքեր ներկայացրեցին բաժնի կողմից իրականացվող աշխատանքները ցանցային տվյալների և էլեկտրոնային համակարգերի վերաբերյալ: Նախանշվեցին հետագա համագործակցության հնարավորությունները: Ա. Սարգսյանը այցելել է նաև գրադարան, ծանոթացել ֆոնդերին, հասանելի գրականությանը և էլեկտրոնային ռեսուրսներին:

Պատվիրակության անդամների համար կազմակերպվեց նաև շրջայց Տուշայի համալսարանի տարածքում, ֆակուլտետներում և լաբորատորիաներում:

Արմեն Սարգսյան

ԳԿՄԿ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ

27.05.2019 թ.